ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ III, № 1, 1950 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ֆ. Մ. Նուրբերյան

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԻՆՔՆԱՓՈՇՈՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՐԱ

Մեկուսացված ինքնափոշոտման ազդեցությունը բամբակենու վրա պարզելու համար 1947 թվին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գենետիկայի և Սելեկցիայի Ինստիտուտում բամբակենու 0246, 1298, 915 և Շրեղեր սորտերի վրա դրեցինք փորձ՝ հետևյալ վարիանտներով.

1. առանձին ծաղիկների ինքնափոշոտում, մեկուսացուցիչների մեջ,

2. բնական ինքնափոշոտում՝ որպես ստուգիչ։

Երկու դեպքում էլ ընտրել ենք բույսերի պտղատու ճյուղերի առաջին ծաղիկները՝ բացվելուց մեկ օր առաջ։ Մեկուսացուցիչի տեսական ազդեցությունից խուսափելու համար փոշոտումից անմիջապես հետո այն հեռացրել ենք։ Այդ ծաղիկներից ստացված սերմերը ցանել ենք 1948 թվին։

Մեկուսացված և բնական ինքնափոշոտված ծաղիկների սերմերից ստացված բույսերի վրա կատարված ֆենոլոգիական դիտողությունները ցույց տվին, որ մեկուսացված ծաղիկներից ստացված սերմերի ծլունակությունը բարձր է և ծլումը դաշտային պայմաններում ավելի արագ է կատարվում, քան բնական պայմաններում փոշոտված ծաղիկներից ստացված սերմերինը։ Սրան հակառակ, կենսունակ բույսերի թիվն ավելի բարձր է բնական ինքնափոշոտումից ստացված սերմերի սերնդում։ Այս հանգամանքն անհամեմատ թույլ է արտահայտված 0246 սորտի մոտ և ավելի ակնհայտ է 1298 սորտում։

Բույսերի սկզբնական տերևների առաջացման վերաբերյալ կատարված դիտողությունները, որ բերում ենք № 1 աղյուսակում, ցույց են տալիս, որ մեկուսացված ինքնափոշոտումից ստացված բույսերի սկզբնական տերևները երևում են 1—6 օր ավելի շուտ, քան բնական ինքնափոշոտումից ստացված բույսերի մոտ։

Հետազոտում, առանձնապես հասունացման շրջանում եղած այդ տարբերությունը սորտի սահմաններում, հիմնականում վերանում է, բացառությամբ 915 և Շրեղեր սորտերի, որոնցում բնական ինքնափոշոտումից ստացված բույսերը 1—2 օրով ավելի շատ են հասունանում, քան մեկուսացման դեպքում։

1947 թ. մեկուսացված ծաղիկներից ստացված բույսերի վրա հաջորդ տարում կատարել ենք ծաղիկների կրկնակի մեկուսացում, իսկ բնական ինքնափոշոտումից ստացված բույսերի ծաղիկներից խոզել ենք դարձյալ բնական ինքնափոշոտման համար։ Կրկնակի մեկուսացված և ազատ ինքնափոշոտումից ստացված բույսերի բերքի՝ հումքի և սերմերի կշռի, ինչպես նաև սերմերի քանակի մեջ եղած տարբերությունները պարզելու նպա-

Մեկուսացված և բնական ինքնափոշոտումից ստացված բույսերի սկզբնական տերևների առաջացման դինամիկան

Աղյուսակ 1

№ №	Սորտ	Վարիանտ	Տերևների երևալը I	II	III	IV	V
1	0246	Մեկուսացված ինքնափոշոտում . . .	25/V	3/VI	7/VI	10/VI	14/VI
		Բնական ինքնափոշոտում	31/V	2/VI	9/VI	14/VI	18/VI
2	1298	Մեկուսացված ինքնափոշոտում . . .	31/V	3/VI	6/VI	10/VI	13/VI
		Բնական ինքնափոշոտում	3/VI	4/VI	9/VI	14/VI	18/VI
3	915	Մեկուսացված ինքնափոշոտում . . .	30/V	3/VI	8/VI	11/VI	16/VI
		Բնական ինքնափոշոտում	31/V	3/VI	8/VI	12/VI	15/VI
4	Երեգեր	Մեկուսացված ինքնափոշոտում . . .	3/VI	7/VI	10/VI	12/VI	15/VI
		Բնական ինքնափոշոտում	3/VI	8/VI	11/VI	14/VI	18/VI

տակով կատարել ենք լաբորատորիական անալիզներ յուրաքանչյուր վարիանտից հարյուրական կնգուղի վրա, որոնց միջին տվյալները բերում ենք 2-րդ աղյուսակում։

Կրկնակի մեկուսացման բացասական ազդեցությունը բամբակենու հումքի, սերմերի կշռի և նրանց քանակի վրա

Աղյուսակ 2

№ №	Սորտ	Մեկ կնգուղի միջին տվյալները: Կրկնակի մեկուսացված ծաղիկներ — Հումքի կշիռը գր.	Սերմի կշիռը գր.	Սերմերի թիվը	Բնական ինքնափոշոտված ծաղիկներ — Հումքի կշիռը գր.	Սերմերի կշիռը գր.	Սերմերի թիվը	Բնական ինքնափոշոտման բերքի հավելումը կրկնակի մեկուսացվածի նկատմամբ %%-ով — Հումքի	Սերմերի կշիռը գր.	Սերմերի թիվը
1	0246	4,2	2,9	23,8	4,5	3,5	24,6	107,4	120,7	103,4
2	1298	3,5	2,3	24,3	4,4	2,3	33,4	[illegible]	121,7	137,4
3	915	5,0	3,2	26,3	5,0	3,3	32,0	100,0	103,1	121,6
4	Երեգեր	3,6	2,5	27,4	3,9	2,7	29,4	108,5	108,0	107,3

2-րդ աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ բնական ինքնափոշոտված սերմերի բույսերից ստացված հումքի կշիռը, նույնպես և սերմերի թիվը ու կշիռը, ավելի բարձր է, քան կրկնակի ինքնափոշոտու-

մից ստացված բույսերի մոտ։ Բացառություն է կազմում № 915 սորտը, որի մոտ հումքի կշիռը մնացել է անփոփոխ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բամբակենու մեկուսացված ծաղիկներից ստացված սերմերը շուտ են ծլում, դաշտային պայմաններում նրանց ծլունակությունն անհամեմատ բարձր է, բայց տալիս են ցածր կենսունակություն ունեցող բույսեր։

2. Ծլումից մինչև 5-րդ տերևների երևալը մեկուսացումից ստացված բույսերն աճում են սովորականից արագ. ծաղկման շրջանում այդ տարբերությունը թուլանում է, իսկ հասունացումը բնական ինքնափոշոտումից ստացված որոշ սորտերի մոտ 1—2 օր ավելի շուտ է կատարվում։

3. Կրկնակի մեկուսացման հետևանքով սերմերի և հումքի կշիռը, ինչպես նաև սերմերի թիվը, պակասում է։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Բույսերի Գենետիկայի և Սելեկցիայի Ինստիտուտ։

Ф. М. Нубарян

Влияние изолированного самоопыления на потомство хлопчатника

Выводы

1. Полученные от изолированных цветков хлопчатника семена при посеве всходят раньше контрольных растений, особенно в полевых условиях, но растения от этих семян менее жизнеспособны.

2. Растения от изолированного самоопыления от всходов до появления 5-го листа развиваются сравнительно быстрее. Эта разница слабеет в период цветения, а созревание у некоторых сортов наступает раньше на 1—2 дня.

3. Повторная изоляция цветка хлопчатника приводит к снижению веса семян, выхода волокна и количества семян.